# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

## ԿԱՐՐԷԼԻ ԳԻՒՏԸ ԿԵԱՆՔԸ ԱՐՀԵՍՏԱՊԷՍ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ։

*Այն ամեն հրաշքներից յետոյ, որ մեզ տուեց քսաներորդ դարը, այժմ մենք կարծես թէ մօտեցել ենք գիտութեան մի նոր հրաշքի, որ երևի թէ ամենից անհաւատալին է։ Արտասահմանի թերթերը հաղորդեցին մի ապշեցնող գիւտի մասին, որ խոստանում է ամբողջ յեղափոխութիւն գցել բիօլօգիայի մէջ և գուցէ նոյն իսկ բանայ կեանքի դարեւոր առեղծուածի վրայից խորհրդաւոր վարագոյրը։ Բանը հետևեալումն է կայանում։*

*Ֆրանսիացի դօքտոր Ալէքսիս Կարրէլին, որ աշխատում է Նիւ Եօրկի Ռօկֆէլլէրի ինստիտուտում, այս օրերս յաջողեց յայտնագործել կեանքի արհեստապէս պահպանումը։ Այս առասպելական յայտնագործութեան պատիւը պատկանում է հաւասարապէս և նրա ասիստէնտին։*

*Այս գիտնականների գործածուած առանձին մետօդների շնորհիւ չափահաս կենդանիների ամենատարբեր գործարանները կարող են կեանքը շարունակել յօրինուածքից դուրս։*

## ԹՈՔԱԽՏԸ ԲՈՒԺԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

*Մոսկուայում մանուկների բժշկական ընկերութեան նիստում կին բժիշկ Ա. Ֆէօդօրովիչը ծանօթացրել է թոքախտը իտալացի պրօֆէսօր* Forlatine-*ի եղանակով բժշկելու նոր միջոցի հետ։ Պրօֆէսօրը հնարել է մի գործիք, որի օգնութեամբ հիւանդի թոքերի լանջամաշկի (պլէվրա) խոռոչում մտցնում են բորակածին գազ, և եթէ միւս թոքը վնասուած չէ, հիւանդ թոքը բժշկւում է*